ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չը տպելիքը (երեք թերից պակաս) չէ վերադարձնում

Անձնական ռեակցութիւն խմբագրի նեռ երեքարի եւ ուրբաթ առաւ. ժ. 11—12։

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

Թիֆլիս, Մադաթեան փ. տ. № 15 *բաց է ամեն օր* (բացի կիրակի եւ տօն օրերից), *առ.* 10¼ *ժ. մինչև* 2¼-*ը կէսօրից յետոյ Հասցէն՝* ТИФЛИСЪ,ред ТАРАЗЪ. Rédaction du Journal TARAZ Caucase, Tiflis. **Տելեֆոն № 282։**

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աղբիւր 3 *ր.* (արտասահման 5 *ր.*) **Տարազ**—6 *ր.* (արտասահման 10 *ր.*) **Աղբիւր-Տարազ**, *միասին տալով* 10 *ր.* (արտասահման 18 *ր.*) **Տարազ** *ամիսը* 50 *կ. առանձին №-ը երկու թերթից* 30 *կ., մի թերթից* 20 *կ.*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ընդունում են ամեն լեզուով, **Տարազի** *երեսի մի հինգերորդական տողը առաջին երես* 40 *կոպ. վերջին երես* 25 *կ. մանրատառը (պետիտ)։ Արտատպումները կրկնակի։ Շատ անգամ կրկնող յայտարարութիւնների առանձին համաձայնութեամբ։*

Գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, քաղաքական

պատկերազարդ շաբաթաթերթ. լոյս է տեսնում շաբաթը մի անգամ, կիրակի օրերը։

№ 13 Կիրակի, ապրիլի 17 | Տասնևվեցերորդ տարի 1905

ՍԸՐ ՈՒ ՔԸՐ, ԴԸՐԴ ՈՒ ՎԸՐԴ

(Ժողովրդական)

Գարունն եկաւ, վարդ եմ ուզում,
Սրտիս համար դարդ եմ ուզում...
—Հէյ, ծաղիկներ, ծառ ու կանաչ,
Իմ դարդերին դուք չէք ճանաչ.
Դարդս՝ սէրն է,
Սիրաս՝ ոչէրն է.
Ա՜խ, իմ վարդը,
Վա՜խ, իմ դարդը...
Աշուղ դառած՝ երգ եմ կապում,
Սազս առած՝ սար, ձոր չափում.
Սարի վերայ, քարի վերայ
Վարդ եմ լալիս, դարդ եմ լալիս։

Անգութ սարեր, խոր-խոր ձորեր,
Իմ դարդերին դարման արէք.
Վերէն թափուող զուլալ ջրեր,
Իմ ծով դարդերն հեռու տարէք։
Քարի վրայ կանգ եմ առել,
Սիրտս արնի ծով ա դառել.
Ա՜խ, իմ սարեր, ինձ խղճացէք,
Բախտիս փակած ճամբէն բացէք...

Բլբուլն ասաց՝ վարդ սիրեմ,
Աշուղն ասաց՝ դարդ սիրեմ.
Այ վարդ աղջիկ,
Այ դարդ աղջիկ,
Սէրդ՝ կրակ,
Սիրտս՝ ճրագ։
Վառուում եմ ես՝ ճար չունեմ,
Մեռնում եմ ես՝ ճար չունեմ։
Ա՜խ, նուռ աղջիկ,
Անուշ աղջիկ,
Սէրդ՝ վառ բոց,
Սիլտս՝ հնոց...

Այ սար ու քար ընկնող ախպէր,
Ա՛յ դարդ ու վարդ սիրող ախպէր,
Արի նատենք՝ ձէն ձէնի տանք,
Արի նատենք՝ ժէլ դարդը լանք։
—Հէյ, ջան սարեր, բարձր սարեր,
Հէյ, ջան քարեր, կարծր քարեր,
Դարդից, վարդից հարատ, փարատ,
Ուրախ օրին արօտ—կարօտ՝
Մանք ենք գալիս,
Ջան ենք տալիս,
Վարդ ենք ուզում,
Դարդ ենք ուզում...

Յարութիւն Պետրոսեան

ՔԲ
1905
Քրիստոս
Աստուած
Հայ
Աստուածածին
Աստուած
Հայ
Աստուածածին
Աստուած
Հայ
Աստուածածին

Աչէն, ասէն ասեմ ձեզ, եթէ հատն ցորենւոյ անկեալ յերկիր մեռանիցի, բաղում արդիւնս առնէ։

ՃՕՃԿԱՆԵՑԻ ԽՈՒԴԻՆ

Դիւցազներգական պօէմ ժողովրդական պատմածքներից

—

(«Վէհրէ-Հայաստան»-ի ժամանակակից մի մոռացված հերոսի իրական կեանքից)

—

Նւագ առաջին

(Շար. Տարազ № 9)

Վկանջ դիր և մեզ, Էյ Դոնղուզ-Ղոան,
Մեր Սօսի Աղէն, Մէլիք-Յովհաննան,
Աթունց Առաքել, ես Խաժայ-Թունէս
Հնկանը ձորերը՝ Բօլնիս, Դումանիս.
Խմբի մէջն էին Ապրես [1]), Մխիթար,
Թափառում էինք անքուն, անդադար [2]),
Քիւրդ Օքիւզ Ադի արշաւանքներին
Որ արդելը լինենք. ու բարափներին
Դօշը դէմ տւած,
Կանչելով Աստւած
Էնքան ղօշունի [3]) առաջ կըտրեցինք,
Մի բուռն քաջերս կուի բռնւեցինք։
Ծանօթ Թուրքերը ձէն տւին Սօսուն.
«Մենք նամարդներ չենք և ոչ անասուն.
Ձեր տան օջաղում ձեր հացն ենք կերել,
Չենք ուզում այդ հաց ոտով կխճորել [4]),
Ո՛վ հացի, աղի զադրը [5]) չիմանայ
Նա մարդ չէ, լաւ է աչքը քոռանայ
Աբի խնայիր քո Ջանին Ջիւան,
Թէ չէ՝ ղօշունը կանի քո դիւան»։
—«Ի՞նչ էք արեան ծով կապել ժողովրդին,
Մօհտաջ [6]) չեմ մընալ ձեզ պէս նամարդին»,
Սաստիկ ծըղրտաց մեր Սօսի Աղէն.
Եւ մի դընդակով Օքիւզի տըղէն
Հեծած նըժոյգից, ուռաչին անգամ,
Ցած է գլորւում գետնին արնաքամ։
Եւ մինչ կը հասնէր կատղած հարամին,
Մեր կրտրիճները միջոց չը տւին,
Հըրացաններըը լըցրած բարուրով [7])՝
Արին տանեհինդ Թուրք գիւլլախսրով [8]):
Շատ կուից յետոյ Գուէշ [9]) բերդի մօտ,
Երբ վերջանում է աչմայ ու վառօդ,
Թրերն հանում են Սօսին, Յովհաննան
Եւ ընկնում էնքան ղօշունի բերան.
Վէրքեր են տալիս, վէրքեր ստանում,
Վերջը իրենք էլ մատաղ են գընում [10])»։

—

—«Երբա՛զ ես պատմում, Էյ Խաժայ-Թունի,
Այդ ի՞նչ լըսեցի, ախ թէ երանի
Երկու ականջըս իսպառ խըլանար՝
Այդ չը լսէի, եղայ խելագար։
Էն սիրուն բոյը, էն սիրուն պատկեր,
Էն սև սև աչքեր, էն սըրած բեղեր,
Որ ունէին քաջ Յովհաննան, Սօսին,
Ախնաման, չըքնաղ երկրիս երեսին,
Ո՜հ, երբ յիշում եմ, ապուշ եմ կտրում,
Նրանց պէս քաջերին հըրապով վընտռում։
Հա, միտըս եկաւ, եղբայրնե՛ր, եաւաշ,
Ի՞նչ եղան արդեօք Ծուկին ու Քալաշ»...

—Նրանք էլ մեռան,
Մուրազը առան
Շատ յաղթութիւնով
Ու քաջութիւնով»։

—«Ադպէր, քաջերից շատերն են մեռել,
Շատերն են աղքին արիւնը թափել.

Մենք ենք մընացել անբան ու անգործ,
Ո՛րըս հոտկան ենք, որըս երկրագործ,
Բայց եկէք թողնենք արօր ու գութան,
Պահենք իրաւունք, մեր հող ու վաթան.
Կուով ու զէնքով քաջերի նման
Թասիբով ապրենք, մըտնենք գերեզման։
Հալրաթ մեր որդիք մեզ կը նմանին,
Օրհնանք կը թափեն մեր գերեզմանին.
Մեր սար ու դաշտի անցքերը կթրթեն,
Պատւով, թասիբով մեզ նման կապրեն.
Թող մեզնից յետոյ ապահով մնունդ
Ու կեանք ստանայ յետագայ սերունդ»։

—

—«Վաւ կանես դու, Դօնղուզ-Ղոան,
Խուդու կեանքից պատմես մի բան։
Միայն անունն ենք լըսել,
Բայց երեսը չենք տեսել»։
—«Տըղեղ մարդ է։ Ի՞նչ կանես,
Հող չի ծնել Խուդի պէս.
Նրան ոչ ոք չի զօրի.
Սաղ Բօլչալու և Լօռի
Խուդու անունն է բըռնած,
Մինչ Դաղստան է հասած։
Լէզգիները դողէ դող՝
Ման են գալիս գողէ գող.
Հէնց որ Խուդուն տեսնում են,
Լեզգապատառ փախչում են։
Պատիւ Խուդու անունին,
Մօտ չեն եկել ձօճկանցին.
Գոռ, աւազակ ու դուշման
Հեռացել են fon-փոշման...

—

Բայց որ տեսնէք, Սայի, Թունի,
Թէ նա ինչ տեսք, ինչ բոյ ունի,
Կը զարմանաք. կարճ ու բոխալ,
Բայց թէ հարցնէք հալ ու ախալ,
Դուք աւելի կը զարմանաք,
Եւ չը կարծէք խօսըս հաճոյ.
Ո՞վ է տեսել էն ջուռեաքը,
Է՛ն հուռիաբ, էն դւաքը [1]).
Իսկ որ Աստւած հեռու տանի։
Ճի այնպիսի գոռոց ունի

Ծըղրտալիս,
Թուր հանելիս,

[1]) Շուլաւերցի այս քաջի հօր անունը նոյնպէս եղել է Խուդի, որը նոյնպէս քաջութեամբ մանաւանդ ուխտներին է ունեցել կռիւներին, սակայն չը պէտք է շփոթել ձօճկանեցի անզուգական Խուդու հետ։ [2]) Անհանգիստ։ [3]) Զօրքի։ [4]) Տրորել, ոտի տակ տալ։ [5]) Պատիւը։ [6]) Պարտական։ [7]) վառօդով։ [8]) Դնդակահար։ [9]) Քաշւէթ, Բօլնիսից վերև, Դումանիսի կողմը։ [10])

Ժողովրդից կան պնդողներ, որ Օքիւզի տղին սպանողը եղել է ոչ թէ Սօսին, այլ նոյն գիւղացի Աթունց Առաքելը, բայց վերին անդամ պատմողները և այդ անգրին ականատես հանդուցեալ տատս հաստատում են Խ. Աբովեանի գրածի ճըշտութիւնը, այսինքն Սօսի Աղի ձեռքով սպանուելը։ Տատիս (100 տարեկան. վախճանւած 1905 թ. յունւարի 1-ին) պատմածին նայելով, երբ Օքիւզի տղէն սպանուում է և դօշունը վրայ տալ է սկսում, վախից քարափներից ցած են թափւում և փախչում բոլոր գնացողները, Թողնելով Սօսուն և Յովհաննին մէն-մինակ դօշունի առաջ։

Խ. Աբովեանը «Վէրք Հայաստանի»-ի մէջ, 189 և 190 էջերում, մեծ գովեստով շուլաւերցի այդ երկու կորիճ հայերի մասին խօսելուց և կռիւը նկարագրելուց յետոյ, վերջացնում է այս խօսքերով.

«Հանգի՜ստ ձեր սուրբ ոսկերացը՝ ո՜վ քաջ նահատակք։ Ձեր չիւան ջանի արինն ա, որ էսպէս սիրտս կրակում աւ ի՞նչ Հայ ձեր անունը լսի ու ձեր լիս գերեզմանին ողորմի չասի, ձեր յիշատակը իր սրտումը չը գրի։ Մե՛ իմանաք, թէ ձեր ազիզ արինը նհաս տեղը թափեցաւ։ Էդպէս պատւական արինն էր, որ Աստուծոյ սիրտը գութ բցեց, մեր աշխարն ազատեց ու էս օր էլ՝ էն ձեր նահատակութեան քարի տակէցը ձէն ա տալիս. Հա՛յդ՝ մե՛զ պէս մեռէք, որ անուն ճարե՛ք»։

Որ աչքարհըս կըսասանի,
Հախից կը գայ և՛ սատանի։

—

Ես ու Խուդին ապրել սէրով,
Ընկեր եղել մանուկ օրով,
Մինչև օրս դարձեալ ընկեր,
Մեր քօլերի ժիր հորսկաններ...

—

Նրա մարդը պատժեց մի օր.
«Խուդին ծընուեց մըսի կտոր
Մի այլանդակ, անկերպարանք.
Անիծեցի իմ սև՛ բաղդին,
Քանի նայում մսի գունդին.
Ի՞նչ թագընեմ, վայ իմ ժեղքին,
Վայր ձըգեցի ղըռան շէմքին,
Որ շընները գան և ուտեն,
Այդ պատիժից ինձ ազատեն։
—«Ի՞նչ ես անում քո զաւակին,—
Նախատելով հարևան կին
Բերեց, տաւ կաթ իր ծծից,—
Նեղանում ես ստեղծւածից։
Աստծոյ սրտին դժար կը գայ,
Ո՞վ կիմանայ, ինչ կը դառնայ»։

—

Հիմի տեսէք ինչ է դառել.
Սաղ Բօրչալու՝ մի Խուդի.
Դուշմանները ձեռք է առել,
Պաշտպան խալխի ու հանդի։
Լեզգինների հիզր [1]) բըռնած,
Դուք կը տեսնէք, մեր Խուդին
Թափառելիս դարան ժըտած,
Շալակն առած և գուդին [2]),
Այժը ինչպէս երկաթը։
Եւ թող ծնած էն օրից,
Հալալ լինի էն կաթը,
Որ ծծել է իր մօրից»...

—

Կէս գիշեր էր։ Անտառի մէջ սևակնած
Ջորս հոգիներ ծառերի տակ նըստոտած.
Որսի մըսեր անց են կացնում շափուրներ,
Համ ուտում են, համ խօսում են գաղտնիքներ...
Քուն էր մըտել շուրջը ամեն արարած,
Միայն նրանք մըռութները կախ արած,
կարծես պատրաստ մի յարձակման կատաղի,
Դէմքեր մըռայլ՝ այնքան նման դաչաղի։
Ղալիճկուտում մարաղ կացած կատւի պէս
Շուրջն են դիտում զգոյշ կերպով սըրատես
Եւ fեօրուկներ [3]) մեծ-մեծ զարսում կըրակին,
Ծօրանջիլով թինկն են տալիս կըռնակին։
Ինչքան էլ քաջ, սրտոտ լինի հարամին,
Ի՞նչ կարող է դըժոխային այդ ժամին
Ծարսափելի այդ մարդկերանց մօտենալ,
Հօ չի գժւել երկինք իսպառ վերանալ։
Քունը կըտրած գևի նման լիսէ լիս
Որսի մընում. մի շըփլթոց լըսելիս
Դարան մընում այդ չորս հոգին կատաղած,
Թանքների վերին ոտը վեր քաշած։
Անցան ժամեր։ Ձը կայ ոչ մի շըփլթոց.
Երեք հոգու միայն լսւեց խըռմփոց.
Իսկ մի հոգի իր չախմախլու [4]) թանքով
Ղարաուլ էր քաշում ծառի արանքով.
Մռայլած էր, քուն չէր գալիս աչքերին,
Հազար բան էր անցնում նրա մտքերին։

—

—«Ի՞նչ էք քընել, ոծ ախմախներ,
Գըլխին դըրել դուք փախխներ.
վեր կացէք շուտ, առէք թանը,
Գնանք փրկել մեր հայի կեանք։
Ի՞նչ ենք նայում խաւարին,
Գնանք հասնենք հաւարին»...

—

Տըղերը իսկոյն վեր թռան,
Թանքները ձեռք առան։

(Ըը շարունակի)

Գրիգոր Բալասանեան

[1]) Հեռքը։ [2]) Դաղարջան, կաշէ պարկ պաշար պահելու համար։ [3]) Գոճղեր։ [4]) Այն ժամանակներին միայն չախմախլու թանքներ էին գործ ածւում։

Ի՞նչ էի մեռելների մէջ անմահին որոնում. Նա յարեաւ.

ՆԿԱՐՉԻ ԳԱՂՏՆԻՔԸ

(Օ. Շչեդրինի)

—

Նկարիչը նկարեց մի պատկեր և բոլորը նայելով այդ պատկերին, մնացին հիացած։

Ուրիշ նկարիչներ էլ շատ ունէին գեղեցիկ, հրաշալի պատկերներ հարուստ, բազմատեսակ գոյներով և նուրբ սուերագծերով, բայց, չը նայած դրան, նկարչի պատկերը, որ միմիայն կարմիր գոյնով էր նկարած, հրաշալի էր և չէր կարելի նայելուց կըշտանալ։ Եւ նայելով այդ պատկերին նկարիչները նախանձում էին և ասում՝ «Ինչ գեղեցիկ նկար է, ինչ զարմանալի են այս պատկերի գոյնը, սուերագծերը»...

«Որտեղից է նա ճարում այդ գոյնը», մտածում էին նկարիչները և երբ մի օր նրան այդ հարցը տւին—նա պատասխանեց։

—Ես չեմ կարող ձեզ ասել այդ,—և շարունակեց նկարել իր նկարները իր զարմանալի գոյնով։

Դրանից յետոյ նկարիչներից մէկը դիտմամբ գնաց հեռուսը Արևելք և կազմեց այնտեղ թանկագին և բաւական պայծառ գոյներ և այդ գոյներով նկարեց մի պատկեր—բայց քիչ ժամանակից յետոյ պատկերի գոյնը թռաւ։

Մեծը հին գրքերից կարողացաւ քաղել մի դեղատոմս կարմիր գոյնի համար և կազմեց մի զարմանալի, աչք շլացնող գոյն—բայց այդ գոյնը կտաւի վրայ դուրս եկաւ մեռած և անկենդան։

Իսկ նկարիչը շարունակում էր նկարել։

Նրա նկարների սուերագծերն աւելի և աւելի կարմիր գոյն էին ստանում—իսկ ինքը նկարիչը օրէցօր աւելի գունատւում էր, գունատւում։ Մի անգամ վերջապէս նրան գտան մեռած իր մի պատկերի առաջ և բարձրացրին դիակը։ Ներկայ եղող բոլոր նկարիչները սկսեցին պտրտել այն զարմանալի գոյնը, որով նա նկատում էր իր պատկերները, և ի զարմանս բոլորի ոչինչ չը կարողացան գտնել։ Բայց երբ հանեցին նրա շորերը, այն ժամանակ բոլորը տեսան նրա կրծքի ձախ կողմում մի խոր վերք։ Այդ վերքը հին էր։ Այդ վերքը նա ունէր իր ամբողջ կեանքում, այնպէս որ վերքի ափերը կոշտացել էին։

Նրան թաղեցին։

Նկարիչները չը յայտնեցին ոչոքի նրա գաղտնիքը և, նայելով նրա պատկերներին, միշտ, ինչպէս առաջ, կրկնում էին։

—Ո՞րտեղից նա կարողացել է ճարել այդ գոյնը։

Անցաւ ժամանակ, նկարիչը մոռացւեց, բայց նրա գործերը մնացին յաւիտեան անմահ...

Ս. Ծակովբեան

Մարդ-Աստուածը

ՄԵՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ

(Կարմեն Սիլվայի—Ռումինիայի Եղիսաբեթ թագուհի)

—

Իսկապէս չը պէտք է այնպիսի արձաններ կանգնեցնել, որոնք չեն կարող իսկական արուեստի արտադրութիւն լինել և նոյնչափ փառաւորել քանդակագործի անունը, որչափ նրանը, ում յիշատակին որ դրուում է արձանը։ Բայց դրա փոխարէն պէտք է պահել և պահպանել նշանաւոր մարդկանց բնակարանները, ինչպէս օրինակ Դէօթէի տունը, Բէթհովէնի տունը և այլն։ Ես արդէն խնդրել եմ թագաւորի եղբօրորդուն և ժառանգին, որ երբ նա ապագայում կառավարութեան ղեկն իր ձեռքն առնէ և մեր բնակարանին տիրանայ, իր հօրեղբօր սենեակները պատուով պահպանէ, որովհետև այդտեղ է ստեղծուել Ռումինիան։ Երիտասարդ իշխանի բնակութեան համար յատկացրին բոյարներից մի հին տուն և հետզհետէ, աստիճանաբար, քանևհինգ տարուայ ընթացքում, այդ հին տունը՝ ըստ պահանջման հարկին, դարձաւ մի պալատ. սակայն թագաւորի սենեակները ամենահետաքրքրականն են, որովհետև այդտեղ է նա ամեն բան տարել, մտածել և գլուխ բերել։ Այդտեղ նա շատ անգամ ամբողջ գիշերն աշխատելով է անցկացրել, փողոցի անկիւնի վրայ գտնուող դրասենեակում. նախկին գահակալ դահլիճն այժմ փառահեղ մատենադարան է դարձել, որտեղ նախարարների խորհրդին նախագահում է արքան։ Ամեն տեղ կան հրաշալի նկարներ. իսկական թանգարան է։

Ռումինիայի թագուհի Եղիսաբէթ (Կարմեն Սիլվա)

Երբ մենք ամուսնացանք, միմիայն մի հատ իւղանկարչ պատկեր ունէինք, այժմ հարիւր թէ մի նկարի տեղ գտնուի. մի ամբողջ պատկերասրահ է կազմուել՝ շատ մեծարժէք նկարներով, որտեղ կը գտնէք Րեբայրայի, Ռեմբրանդի գործերը, Յետոյ Այվազովսկու մի փառահեղ ալիքը՝ իբրև մոդեռն նկարչութիւն։ Մեր ունեցած նկարների մի ամբողջ հատոր է լոյս տեսել, նաև լուսանկարած։



Ֆեյդիաբալ Եամագատա

Ճապոնական գլխ. շաթրի նախագահ

Մատենադարանը կազմած է գերմանական թանգարանի կաղապարով և իսկապէս շատ սիրուն է։ Իմ սենեակները նոյնպէս կառուցած են հետզհետէ, ըստ պահանջման հարկի, ևյատաշտութեան և նկարների համար. ակզբունքին. «մարդ երբէք իր տունը չը պէտք է շինէ վերջացնէ, եթէ ոչ մահը ներս կը մտնի»։ Դղեակն էլ երբէք վերջացրած-

Ծովակալ Եամամասо

Ճապոն. ծովային նոր մինիստր.

պատրաստ չի լինի, որովհետև միշտ կարելի է վերանորոգութիւններ անել և պահանջներն էլ շարունակաբար շատանում են, որովհետև հետզհետէ աւելի ու աւելի շատ մարդիկ են մեզ ընդունելութիւն անում։ Դղեակում կան բազմաթիւ հիանալի սենեակներ։ Թագաւորի գրասենեակը նմանապէս դեղեցիկ պատ-

Անդրկովկասի Մուսուլման խաշնարածները դէպի գաղկական ճանապարհ։

Աֆրիկայի վեցերորդ մասը պզտիկ մի աշխարհ է, որ ամբողջապես ծածկված է անանց անտառներով, ուր ամեն տեսակ ծառեր ու բույսեր կան, որոնք ամեն տարի նոր տերևներ են հագնում, ամեն տարի նոր պտուղներ են տալիս։ Այդ անտառներում ապրում են ամեն տեսակ գազաններ, ամեն տեսակ թռչուններ, ամեն տեսակ սողուններ։ Ամեն տեսակ գազաններ, թռչուններ, սողուններ, միջատներ, ձկներ, ամենքն էլ այնտեղ են գտնվում։ Ամենքն էլ այնտեղ են ապրում, ամենքն էլ այնտեղ են բազմանում։ Ամենքն էլ այնտեղ են ուտում միմյանց։ Ամենքն էլ այնտեղ են ոչնչացնում միմյանց։ Ամենքն էլ այնտեղ են կռվում միմյանց հետ։ Ամենքն էլ այնտեղ են սպանում միմյանց։ Ամենքն էլ այնտեղ են ուտում միմյանց։ Ամենքն էլ այնտեղ են ոչնչանում միմյանց։ Ամենքն էլ այնտեղ են կռվում միմյանց հետ։ Ամենքն էլ այնտեղ են սպանում միմյանց։ Ամենքն էլ այնտեղ են ուտում միմյանց։ Ամենքն էլ այնտեղ են ոչնչանում միմյանց։



Գոմ սև. Հաուբենեզեն

Ամենից ուրախ ապրում են մարդիկ։ Մարդիկ ուրախ են, որ ապրում են այդ անտառներում, որ ուտում են այդ անտառների պտուղները, որ ուտում են այդ անտառների գազանները, որ ուտում են այդ անտառների թռչունները, որ ուտում են այդ անտառների ձկները

Գեղջկուհու Զաւիկը.—Նկար Դեսենբախի, փորագր. Պ. Պահր.

տեայ նստարաններուն վրայ անցկացնելով։ Երբ մայրս մեզ այցելութեան եկաւ, կրոնաւորուհի նրա համար գնեցինք վեննայի հասարակ կարասիք։

Մի հին ռումինական ասացուածք կայ. «Casa domneasca este casa Tzerei», որ նշանակում է. «իշխանի տունը՝ երկրի տունն է»։ Այս ասացուածքը մեր կեանքի ընթացքում կրկին ճշտեց։ Սինայի կենդանարար ջուր և լոյս պարգևողն Պելէշն է, այդ պատճառով էլ մեր սեղանատան սեղանի զարդը այդ ջուրն է, որ հոսում է ուղղակի սեղանի մէջ տեղից. սրանից աւելի ինքնուրոյն զարդ հազիւ թէ լինի։ Պատերազմի ժամանակ երկու տարի դադարեցրինք դղեակի շինութիւնը, որովհետև տներ շինելու համար դրամ չը կար. յետոյ էլ բոլոր աղբիւրները կարծես մի դաշնակցութիւն էին կազմել մեր շէնքի հակառակ՝ կարծես նախազգում էին՝ թէ որքան պէտք է աշխատէին ու գիշեր-ցերեկ տանջուէին։ Այն ժամանակից Պելէշը կարծես մի փոքր յետ քաշուեց և առաջւայ նման առատ ջուր չէ տալիս. նա այլ ևս այն կատաղի, զարթ լեռնային գետը չէ։ Նա էլ իմ օրին է. ես էլ յաճախ ազատութեան կարօտն եմ քաշում և հառաչանք արձակում այն ստրկութեան վերաբերմամբ, որ կապւած է իմ դիրքի հետ։ Ես դեռ կարօտով յիշում եմ այն ժամանակները, երբ ապրում էինք վանքում և երբ մեզ մօտ էր եղբայրս, շէդևական նուագախարդար (կոմպօնիստ) Հալլշտրեօմը և երիտասարդ տէնօր Օէդմանը։ Երգում, նկարում, բանաստեղծում էինք. այն ժամանակ Հալլշարեօմի համար ես պատրաստում էի «Նէագա» օպերայի բնագիրը հէնց Պելէշի հոսանքի մէջ տեղը գրում, որովհետև եղբայրս ուզում էր ինձ նկարել հոսանքի մէջը գտնուող ժայռի վրայ նստած դիրքով։ Նա ինձ ջրի մէջով անցկացրեց մինչև ժայռը. ես հագած ունէի իմ լեռնային կարմիրը զգեստը. և այդպէս ժամերով նստած էի կարկաչող ջրերի մէջ տեղը և բանաստեղծում էի օպերայի բնագիրը, իսկ եղբայրս նկարում էր։ Ամեն օր բանաստեղծում էի մի հատուած, որ Հալլշարեօմն անմիջապէս ձայնագրում էր և երեկոյեան արդէն երգում էինք քառաձայն։ Մենք ամեն տեսակ բառախաղեր ու խաղեր էինք կազմում, ներկայացումներ տալիս մի փայտաշէն դահլիճում, որ շինել էինք տակ վանքի գաւթում, որի յատակը ծածկել էինք փեկոնի տերևներով և եղևնու նորաբողբոջ ոստերով։ Այդտեղ խաղում էինք իբրև ղիվներ, ես իբրև փեկոն, եղբայրս իբրև եղևնի և Հալլշտրեօմը իբրև լեռնային ոգի՝ բոլոր ծաղիկներն ու ծառերը դիւթելով։ Ես ինձ համար արքայական զգեստ էի պատրաստել իսկական մաժուռից, իսկ եղբայրս զրահ՝ իսկական եղևնու կեղևից։ Շատ գեղեցիկ էր. մի երիտասարդ աղջիկ լուսատիկ էր ներկայացնում, ուրիշ աղջիկներ՝ մեր Ալպեան հրաշալի բուսականութեան լեռնային ծաղիկներ. երգում, խաղում, ծիծաղում և ոգևորւած ուզում էինք արշալոյսը տեսնել։ Եւ հէնց որ արևի առաջին ճառագայթները ոսկեզօծում էին, ես բաժակս շրջում էի և աստւածներին զոհարերում։ (Կը շարունակւի)

Գերմ. բնագրից Թարգմ. Իս. Ճարուքիւճեան.

Ա. Ա. Ա.

„ԱՆՄԱՀԸ“

Վէպ Ալֆօնս Դօդէի. ևկարևները Էմիլ Բայարի.

(Շար. Տարազ № 10-ից)

Ի նչպէ՞ս չէ, զայրացաւ Վեդրին. այդ անպիտանը ամեն ջանք գործ էր դնում խեղդել մեր մէջ լաւի և ինքնուրոյնութեան սերմերը. նրանց վայրի խոտ անւանելով, մինչդեռ նրա պարտականութիւնն էր զարգացնել, պահպանել մեր մէջ այդ հակումները... Գարշելին ամեն բան յեղաշրջում էր մեր մէջ, ամենը կորատում էր, յղկում, որպէսզի լինենք ուսումնարանի նստարանի նման տափակ, և կատարելապէս հասնում էր իր նպատակին: Մեր մէջ կային մի քանի խելացի բացառութիւններ, ինչպէս, օրինակ, Գերշերը. նա ատում է այն ամենը, ինչ որ ընդունած է հասարակութեան մէջ, և դրանից ընկնում է անաղնիւ ծայրայեղութիւնների մէջ: Ո՞վ է մեղաւորը, եթէ ոչ այդ անասուն Աստիէն, որ իմ մէջ զարգացրել է ճաշակ դէպի այն ամենը, ինչ որ ծուռումուռ է, գրգռող, որ իմ քանդակագործական աշխատութիւններին ընկուղներով լի տոպրակների նմանութիւն է տալիս, ինչպէս նրանք կոչում են... Բոլոր մեր մեծ ընկերները դուրս են եկել Աստիէի ձեռքի տակից ստորացած, բթացած, անպէտք:

—Իսկ ես, վրայ բերաւ Փրէյդէն:

—Քեզ պահպանել է ճակատագիրը և դու միայն պատահմամբ ես դուրս եկել ողջ և անվնաս այդ բարոյական աւերմունքից. բայց զգուշացիր, նորից կընկնես այդ ագահ կոկորդիլոսի ճանկը: Եւ դեռ այդպիսի մանկավարժների առաջիկ են տալիս, վարձատրում են շքանշաններով, աթոռ են տալիս ճեմարանում:

Վեդրին իր ամբողջ երկարութեամբ փռւած կանաչ խոտի վրայ ու. պաշտպանւած արևից չինարի լայն տերևով, բոլորովին հանգիստ կերպով խօսում էր իր նախկին պրոֆեսորի տգեղ վարմունքի մասին. նրա սպիտակ ու փափկիկ դէմքի գծերն անշարժ էին. միայն փոքր աչքերն էին խարդախ ծիծաղ արտայայտում գաղտագողի:

—Այնքան խոր է առելութիւնդ դէպի ծերունի Աստիէն—միչդեռ բարեկամ ես նրա որդու հետ... դա ինձ զարմացնում է, ասաց Փրէյդէն:

—Պօլ Աստիէն ինձ հետաքրքրում է իր՝ խելառ ինքնավստահութեամբ և չարաճճի պեղեցկուհու գլխի նման փոքրիկ գլխով: Ես կը ցանկանայի իմանալ, թէ նրանից ինչ դուրս կը գայ:

—Ախ, պ. Փրէյդէ, միջամտեց Վեդրինի կինը. եթէ գիտնայիք թէ նա ինչպէ՞ս է շահագործում ամուսնուս: Մուսօյի նոր գալլերէյան, էբաժշտական պաւիլիոնը, ժատուրը, դրանք բոլորը Վեդրինի գործն են... Իսկ Բօզէնի յուշարձանը: Նրան կը վճարեն միայն արձանի շինութեան համար, մինչդեռ գործի զաղափարը, կազմակերպութիւնը—բոլորը—նրանն է:

—Վերջ տուր, ընդհատեց Վեդրին: Այն անպիտան տղան մենակ չէր կարող գլուխ բերել Մուսօյի աշխատութիւնները, որտեղ՝ նրա նման ճարտարապետ-մարտարապետները անհեթեթութիւն անհեթեթութեան հետևից էին գործել, իրար վրայ կիտել, երեսուն տարի շարունակ. ինձ այնտեղ գրաւողը եղել է տեղի գեղեցկութիւնը, կոմսուհու սիրալիր վարմունքը և Փրէյդէյի հարևանութիւնը, որին մենք, պատահմամբ, գտանք կլօ-ժալանժում... և յետոյ, գլխուս շատ գաղափարներ կան, որոնք ինձ խեղդում, ճնշում են և նա, որ ազատում է ինձ այդ բեռից, մեծ ծառայութիւն է ժատուցանում: Ուղեղս նման է մի կայարանի, որտեղից անցնում են երկաթուղու գծեր զանազան ուղղութեամբ և որտեղ բոլոր շոգեկառքերը միանգամից են վառւում: Պօլ Աստիէն հասկացաւ այդ և իւրացրեց իմ գաղափարները, գիտնալով, որ դրա դէմ ես չը պիտի զանգատւեմ: Բայց խարեց, չիմարացնել ինձ նա չէ կարող. ես թափանցում եմ նրա ներսը, երբ պատրաստւում է մի բան կորզել... Ծօսում է կատաղի ձևով, նայում է անտարբեր, յետոյ էլ բերանը թեթև կերպով ծռմռատում է ու պրծաւ գնաց... գործը գլուխ եկաւ... իսկ ինքը, երևի, մառծում է. «ինչ տխմարն է այս Վեդրինը»: Լակոտը չէ էլ հասկանում թէ ինչպէս է զարճացնում ինձ... Այժմ գընանք. ես քեզ ցոյց կը տամ իմ ատլետին, իսկ ապա կը նայենք այս աւերակը... Նա բաւական հետաքրքրիր է:

Նրանք մտան մի տուն, որի յատակներն էլ, առաստաղներն էլ փլւել էին: Գերանների արանքով երևում էր կապոյտ երկինքը. ծխնելոյզներն ամբողջովին ծածկւած էին փաթաթուկներով. տան անկիւնում, եղինջի ու փսորի մէջ, ընկած էր մի յուշարձանի գագէ կաղապար, բաղկացած երեք առանձին առանձին մասերից. Վեդրին բացատրեց

—Մեր երիտասարդ ճարտարապետին կը վառարանեն, ժպտալով ասաց բարեսիրտ քանդակագործը, առանց դառնութեան և՝ բարձրացնելով հին դորգի մի ծայրը, որով ծածկւած էր պատի մեծ ծակը, ներս տարաւ Փրէյդէյին մի մեծ, ընդարձակ սենեակ, փայտէ առաստաղով. դա նրա արհեստանոցն էր, որի պատերը ծեփած էին պաստառներով, իսկ յատակը ծածկւած փսխաթներով: Ընդհանուր տեսքը նման էր ծածկւած բակի կամ սրահի. մի անկիւնում դրւած էր թղէնի, միւսում ցցւած էր ճաքճքւած վառարանի կմաղքը՝ ծածկւած պատառուկի և այծատերևի դրասանգներով: Այստեղ էր աշխատում Վեդրին ամառ-ձմեռ, լաւ ու վատ եղանակին և՝ ինչպէս ինքն էր հաւատացնում, «մինչև անգամ չի էլ փուշտացել». որքան առողջ կազմւածք:

—Քանդակագործութիւնն էլ, ճարտարապետութիւնն էլ հաւասարապէս զզւեցրել են ինձ, ասաց նա.—վերջացած է: Հէնց որ յանձնեցի գործս ու ստացայ փողերս, կը սկսեմ նկարչութեամբ պարապել... Ահա իմ պալատինը, աւելացրեց Վեդրին, ցոյց տալով ընկերին մի անգին անդրի. ասա անկեղծօրէն, ինչպէ՞ս է, հաւանում ես:

Փրէյդէն ուղղակի մնաց ապշած, առաջին իսկ նայւածքից, այնքան մեծ էր արձանը, մարդու հասակից էլ բարձր: Սակայն՝ քանի խորն էր նայում, այնքան աւելի էր նսեմանում նրա ստացած տպաւորութիւնը. նա, կարծես, սկսեց հասկանալ, ըմբռնել այդ գեղարւեստական գործի ամբողջ ոյժը, գեղեցկութիւնը:

—Հրաշալի է, բացականչեց նա:

—Միայն ոչ առաջին նայւածքից, խորամանկ

Ահա իմ պալատինը, ցոյց տալով ընկերին մի ահագին անդրի. ասա անկեղծօրէն, ինչպէ՞ս ես հաւանում:

կերպով նկատեց Վեդրին. վախենում եմ, իշխանուհին չը հաւանի գործս: Պօլ Աստիէն այստեղ կը գայ նրա հետ, երբ կաղապարը պատրաստ կը լինի... Շատ եմ լսել, ցուցահանդիսում, աշխարհիկ կանանց կարծիքները նկարչութեան և քանդակագործութեան մասին... Ոչինչ չեն հասկանում, բայց քննադատում են, մինչդեռ նրանք ցուցահանդէս են գալիս միայն նրա համար, որ ցոյց տան իրենց թարմ, գարնանային զգեստները... Ոչինչ աւելի ծիծաղելի չէ, քան այն, որ մարդիկ ցոյց են տալիս թէ հասկանում են գեղարւեստը, գրաււում են նրանով... Թէկուզ հէնց, օրինակ, երաժշտութիւնով... Դու պէտք է տեսնես նրանց օպերայում, կիրակի օրերը. ուղղակի ծիծաղից կը մեռնես...

(Կը շարունակւի)

Թարգմ. Աբօտեանի

ՀԻՆԳ ԶԳԱՑՄԱՆ

(Գ. Ալյտի)

—

I. Տեսողութիւնը զանազան մարդկանց մօտ լինում է այլ և այլ տեսակ, բայց ընդհանրապէս մարդիկ միշտ տեսնում են այն, ինչ որ ուզում են տեսնել։ «Տեսակետը» ամենակարևոր նշանակութիւնն ունի. այլ և այլ տեսակէտերից սևը երևում է սպիտակ և սպիտակը սև, ինչպէս դա լինում է փաստաբանների, հրապարակախօսների, հասարակական գործիչների աչքում և այլն։ Սովորաբար լաւատեսներն ամեն ինչ տեսնում են վարդագոյն լուսով, կամ նայում են աշխարհի վրայ վարդագոյն ակնոցների միջով. յոռետեսները—սեւ ակնոցների միջով. առհասարակ, մարդիկ սիրում են մէկ մէկու «ակնոցները սրբել»։ Տեսողութեան կողմից որոշւում են կարճատեսներ ու հեռատեսներ։ Հեռատեսների թւին պատկանում են աստղաբաշխները, կարիերիստները, տարիքով աղջկերանց մայրերը. կարճատեսութեամբ աչքի են ընկնում լաւ կանանց ամուսինները, որոնք չեն տեսնում թէ ինչ է կատարւում իրենց քթի տակ։ Սուր տեսողութիւն են ունենում հմուտ մարդիկ, որոնք միշտ, ժօտ թէ հեռու, տեսնում են, ինչ որ վատ է դրւած...

II. Լսողութիւնը միջոց է տալիս բռնել ամեն տեսակ ձայները, որոնցից մարդկային ականջի համար ամենադուրեկանը արժեքըղթերի խշխշոցն է։ Բայց լսողութեան համար աւելի հաճելի են շողոքորթիչ խօսքերը. կանայք ամեն բանից աւելի ախորժակով լսում են սիրային զեղումները, մանաւանդ եթէ դրանց հետ միասին լինում են «հնչուն» ապացոյցներ, ոսկէ և թանկագին ընծաներ։ Ամենաքիչ զարգացած լսողութիւն ունեն հասարակական ճառախօսները, որոնք չեն լսում իրենց սեփական յիմարութիւնները և դերասանները, որոնք վայր ի վերոյ ծափահարութիւնները համարում են աշխարհի ամենալաւ երաժշտութիւնը։ Սովորաբար, ոչ միշտ ականջ ունեցողները լսում են. այսպէս յաճախ լսում են գովասանքի հազիւ լսելի խօսքը, կամ թագուն զրոյցը, բայց չեն լսում խղճի և արդարութեան ձայները։ Հաճութեամբ լսում են յիմարութիւնները ու կեղտոտութիւնները. իսկ խելօք ճառերն ընդունւած է ասել, բայց չը լսել։ Լսողութիւնն ամենից աւելի փչացնում են նորագոյն օպերաները, որոնց կարելի է նայել, բայց չը լսել...

III. Հոտառութեան զործարանը քիթն է, որը տրւած է մարդուն նրա համար, որ նրան բռնեն դէպի քամին։ Հոտառութիւնն առանձնապէս զարգացած է «տապակածի» վերաբերմամբ.—մարդը միշտ իմանում է թէ «որտեղից է գալիս նրա հոտը»։ Հէնց այդպէս էլ, թէև փողերն, ասում են, հոտ չունեն, բայց փորձառու մարդիկ միշտ քթով են գտնում նրանց։ Հոտերից մարդիկ առանձին ախորժակով շնչում են—«գովասանքի խնկահոտը»։ Անդուրեկան հոտ են տալիս տան բարեկամները և պարտատէրերը։ Ամենադուրեկան օծանելիքներն են կանանց համար—«Սիրիր ինձ», օրիորդների համար—«Առաջին համբոյր» և այլն։

VI. Շօշափելիքի համար մարդուն տրւած են գլխաւորապէս երկու ձեռքեր։ Իսկապէս ձեռքերը նշանակւած են մէկը—վերցնելու համար, միւսը—թագցնելու։ Շօշափելիքը խիստ զարգացած է «կաշառք վերցնողների» մօտ, որոնք շօշափելով իմանում են, որ կայ ձապոնացին ամեն բանում եւս գործնական է

—

Մինչև վերջերս շատ քիչ յայտնի, իսկ ներկայումս ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւող ճապոնացոց խելքի ըմբռնողութիւնը զարմանալի գործնական է։ Ճապոնացին՝ իր այդ ըմբռնողութեան շնորհիւ կարողանում է օգտւել թէ ամենահասարակ միջոցներից, թէ՛ ամենանախնական գործիքներից և թէ ամենատարբական հնարքներից։ Ճապոնացու այդ ընդունակութիւնը երևան է գալիս նրա ամեն մի արւեստի, ամեն մի գործի ու ամեն՞մի պարապմունքի մէջ։

Այստեղ առաջ բերւած նկարը ցոյց է տալիս մի տեսակ օդային շարժական կամուրջ, որ ծառայում է խրամատի մէկ ափից միւս ափն անցնելուն։ Կիւսիւ քաղաքում այդպիսի մի շարժական, օդային կամուրջ կայ, որ ձգւած է մի ահագին անդունդի վրայով ժայռից ժայռ։

Օդային շարժական կամուրջ Ճապոնիայում

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

—

Նախապատրաստական կուրսեր ամուսնական կեանքի համար։ Այն ահագին յաջողութիւնը, որ ունեցաւ Դերլինգի նորերս լոյս տեսած գերմաներէն «Ամուսնութեան

ԱՅԴՊԻ՞Ս ԷԻՐ...

—

Այդպէ՞ս, էիր, ի՛մ մատաղ կեանք,
Խիզա՞խ, յանդո՞ւգն ու անվախ,
Ոչ ժամանակ, ոչ տեղ, ոչ ոք
Ոչ ոք չկար քեզ համար արգել։

Ոչ ոք չկար քեզ համար արգել,
Ոչ ոք չկար քեզ համար խոչընդոտ,
Ոչ ոք չկար քեզ համար ընդդէմ,
Ոչ ոք չկար քեզ համար ընդդէմ։

Ոչ ոք չկար քեզ համար ընդդէմ,
Ոչ ոք չկար քեզ համար խոչընդոտ,
Ոչ ոք չկար քեզ համար արգել,

ՏԱՐԱԶ

XVI տ. № 13 1905 թ. կիրակի, 17 ապրիլի

Խմբագիչներ հայի տան անխռովեցս **Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ս. ՍԱՀԱԿ, ս. ՄԵՍՐՈՊ, ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ, ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ** (Դեւոնդ երէց orինում է հայ ճախարարներին) *ընտիր գրաւիչներ,*

հատը 1 ր.—50 կ., հինգ պատկերը միասին 6 ր.։

Հրաւիրւում են ձեռնհաս գործակալները այդ շքեղ պատկերները ազգի մէջ տարածելու համար։

ՏԱՐԱԶի ներկայ №-ը բաղկացած է երկու կրկնակի թերթերից, *16* երես։

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

№ 13 ՏԱՐԱԶ պատկ. ը տրաք. *№ 13*

ՆՆԱՐՆԵՐ Զատիկ Յիսուս դագաղի մէջ։ Նա յարեաւ։ Մարգ-Աստուածը։ Ռուսին. Քաղուհի եղեսաբլիը (Կարմէն Սիլբա) Երդեխա Անդրկովկասի մուսուլման խաչնարածները զէմի զատկական շուկայ։ Ցեչդմարշալ Եամպատա, Ճապոն. գլխ. շաբաթ Նախագահ։ Մոլեակալ Եամամատա, Ճապոն. ծով. Նոր մինիատր։ Գեներ.-ադիւտ. Վ. Սախարով, ռուս. զինուոր. մինիստր։ Ծովակալ Ռօժեստվենսկի, հրամանատար II էսկադր. Գեն. բարոն Կաուլբարս, Նախկ. հրամանատ. մանջուր. Բ. բանակի։ Մարդկային կեանքը արիւնարբու ազգերի մէջ։ Ջնդկուհու Զատիկը։ Ահա իմ պալատները։ Օգտակին շարժ. կամուրջ Ճապոնիայում։ Մուկդէնի մի փողոցը ռուս զօրքի հեռանալու օրը։

Նիհիլ՝ Սար ու քար, պարզ ու վարդ (ժողովրդական)—Յար. Պետրոսեան։ Ճոճկանեցի Յուդին (դիւցազներգ. պօէմ)—Գր Բալասանեան։ Նիարչի գագանիքը (Օ Շշէգրինի)—Ս. Յակոբեան։ Մեր բնակարանը (Կարմէն Միլսայի)—գեր. բնագրից թարգմ.—Խս. Յարութիւնեան։ Անմահը (ֆէյլ Ալֆ. Դօդէի)—Աբեղարանի։ Երդիծաբանական՝ Հինգ զգայարան (Գ. Այլսի)—Ղ. Ճապոնային ամէն բանում և գործնական է։ Այդպէս էլը (բառատուիծ)—Յակ. Յակոբեան։ ԱՅԼԵՒ-ԱՅԼԻ՝ Նախապատերազմական կուրսեր ամուսնական կեանքի համար։

№ 4 Աղբիւր *№ 4*

Մանուկների ուղիղքը Յիսուսին, Յարութիւն. Յիսուսին մանուկների պատգամաւորութիւնը մատուցանում է Ծաղիկ (պատկեր). Գարունը եկաւ, Բրիտոս Յարեաւ, Կ. Կ. Մ.-Շահ. կեանքը Բակում, (պատկեր). Մարիկայի Զատիկ պիշերայ երազը (7 պատկերով), Սօվասիլնա. Մինձհնակը ինչ է ուզում մարդուց (աւանդութիւն), Աբ. Խնկոյեան. Օձն իր ձւանիերով, (պատկեր), Բնագիտութիւն. Գունաւորիչ (պատկերով) Լիմենա. Հովիւ երգը գարնան (տատանաւոր պատկերով), Միխ. Տ. Ս.-եան. Բէյլ որդին (բռնախական պատմուածք) Թարգմ. Ֆրանս. Ա. Եղիազար. Ես ծանրը վիշտը (տատանաւոր), Արշակ Կայծուկի. Պատմական. Արաս բալ նահապետ, Լ. Մ. Ամիրան, (պօչէմ շար. և վերջ), Յարութիւն Թումանեան. Ժամացոյցը աշտարակի վրայ (փոխադրութիւն), Սահակ Ե. Տ.-Յովհաննիսեան. Զարձալիք. Հանելուկներ. Շուտասելուկ. Խնդիր. Յայտարարութիւններ։

№ 13 ՏԱՐԱԶ լրագրի *№ 13*

Տ. Արսէն ա. ք. Բագրատունի (պատկերով)—Մ. Ե. **Մեր բպրակիցները՝** Մի չարամիտ գրութեան առիթով (երեւանից)—եան։ Վկայուած անկարգութեանց յայտերը (Շուշուց)—Ղազանչեցի։ Մ. եկմալեանի յիշատակին (Ս. Պետերբուրգից)—Լ. Խաչատուր։ Ս Հաթումեանի գերեզմանը (Պարիզից)—Յար. Մեծատուրեան։ **ԲՆՆԱԴԱՏԱԿԱՆ՝** Գրականութիւն և մամուլ։ Հրատարակչական նորութիւններ՝ Համառօտագիր լրագրողների միութիւն։ Մոսկուայի թերթերի աշխատակիցների պահանջը։ Нов. Обоз. Ծրագրի ընդարձակում, «Рѣчь» լրագիր Քութայիսում։ Դրամագլուխ։ Ժամանակագրութիւն։ Գեղարուեստական քրօնիկոն։ Գաւառական սուրհանդակ՝ Դերբենդից—Հովիւ։ Ռուսական սուրհանդակ։ Արտասահմանեան քրօնիկոն։ **ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ՝** Խորհնային է Աստուածաշնչի «Մնացորդաց գրքերի» առաջին հայ թարգմանողը Ասորեբէնից (շար. և վերջ)—Բարդուղիմ. եպ. Պէտրոգեան։ Մանուկ գագաղի առաջ—Սաթենիկ Արտեմեան։ **ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ՝** Ծառագութիւն և սերունդ (շար.)—Բժ. Ա. Շեխեան։ Ի՞նչ պէտք է ուտենք մենք (շար.)—Նեսար։ **ՊԱՏԵՐԱԶՄԸ**—Հեռ. Ռուս. Գործ. **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։**

ԱՐՍԷՆ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

—

Թիֆլիսում ընդարձակ ժողովրդականութիւն վայելող Արսէն աւ. քահ. Բագրատունու նախկին սաներն ու սանուհիները, միացած նրա համակրողների հետ, պատրաստել են առաջիկայ կիրակի, ապրիլի 24-ին, պատուել նրա քահանայական և ուսուցչական 30-ամեայ արդիւնաւէտ գործունէութիւնը մի հանդէսով։

Լինելով մէր հօր նախկին սաներից մէկը, որը պահպանել է նրա մասին—աւելորդ յիշատակներ, մենք ծոյլ ենք տալիս մեզ մի քիչ երկարօրէն խօսել հայ Բագրատունու՝ իբրև ուսուցչի, հասարակական գործչի և քահանայի մասին, մասնաւորապէս նրա անձնական արժանիքները։

Տէր Արսէնը ծնուած է 1843 թ., սկզբնական ուսումն ստացել է նախ Վաղարշապատի դպրոցում, յետոյ ս. Էջմիածնի ժառանգաւորաց վարժարանում, ապա անցել է Թէոդոսիա՝ Ալիպեան ուսումնարանը և վերջն եղել է ազատ ունկնդիր Պետերբուրգի հաւատալարանի իրաւաբանական բաժնի կուրսերին։ Ուսումն աւարտելուց յետոյ սկսել է պարապել կրօնի և հայոց լեզուի դասատուութեամբ հետեւեալ դպրոցներում հետեւողական կարգով. Մարկոսեանի՝ Վանքի ծխական ուսումնարանում, Մոզնու և Նորաշէնի ծխական ուսումնարաններում, Ամիրաղեանի ժառանգաւոր ռէալական դպրոցում, յետոյ Թաւաքալեանի և Մէլիք-Բեգլարեանի Նոյնպիսի դպրոցում, Երէցփոխեանի և Մանդինեանի մասնաւոր պրոգիմնազիայում, Մարտինովսկու և Սերպինէի պրոգիմնազիաներում, Կոբիևի մասնաւոր դպրոցում, Գայիանեան օրիորդաց դպրոցում, Մ.-Յովհաննեան օրիորդաց դպրոցում, Արհեստաւորաց դպրոցում, Միքայէլեան հիւանդանոցի ֆելդշերեան դպրոցում, Ներսիսեան հոգևոր դպրանոցում, Դպրաց ընծայարանում։ Մինչև այժմ էլ Տէր Արսէնը շարունակում է իր ուսուցչական պաշտօնը Արհեստաւորաց և Մ.-Յովհաննեան դպրոցներում։

Ուշադրութեան արժանի է Տէր Արսէնի դասախօսութեան մեթոդը։ Նրա դասախօսութիւնները միշտ կապած են եղել շրջապատող իրական կեանքի առօրեայ երևոյթների հետ. ընտիրը կամ չոր նիւթը միշտ համեմել է մեկնական և համեմատական ազով. դասախօսի ամենամեծ ջանքն այն է եղած, որ քննելով նիւթը՝ աներին խօսել տալով և խօսակից լինելով, նրանց գանել տալով որոնելի դաղափարը և բարոյականը, նրանց գործել տալով իր դեկավարութեամբ, դուրս բերեն յօդուածագրի կամ հեղինակի, կամ դասի ներքին նպատակը, ոգին, ուղղութիւնը, մի խօսքով—թէ ինչ է ուզում ասել և ճիշտ է ասել յօդուածագիրը կամ հեղինակը, կամ ճիշտ է դուրս բերած կեանքի իսկական պատկերը դասական յօդուածի մէջ։ Այս մեթոդը և՛ կենդանացնում է դասը, որովհետև շարժում է աշակերտի հետաքրքրութիւնը, և՛ օգտակար է դարձնում, որովհետև մոբիլիզացնում է դասը սաների մէջ։ Դասախօսութեան այս ձևը Տէր Արսէնին շարժառիթ է եղել սահմանելու այսպէս կոչած Անհատական պիրը, որպիսին պահել պատեհրում է նա իր ընթացաւարտ սաներին և սանուհիներին։ Անհատական պիրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թղթեան կեանքի մի մասնան, որի մէջ դպրոցից վեանք եկած տղան կամ աղջիկը պրում է իր հոգեկան ներբին կեանքի վրայ լաւ



Արսէն աւ. քահ. Բագրատունի

Քահանայական-ուսուցչական գործունէութեան 30-ամեակի առիթով։

կամ վատ, ախորժ կամ անախորժ, ուրախ կամ տխուր տպաւորութիւն թողնող նշանաւոր արկածներ և դիպուածներ, խօսք ու զրոյց, կարգացածն ու լսածը, տեսածն ու ասածը։ Տեսածները, լսածները, խօսքերը, ասածները, արածները գրւում են իբրև իրողութիւն։ Իրողութիւնը եթէ մի որևէ տպաւորութիւն է թողնում, այն գրւում է իբրև տպաւորութիւն։ Իրողութիւնը ենթարկւում է արձանագրողի անաչառ քննադատութեան և այդ գործողութիւնը գրւում է իբրև քննութիւն։ Քննութիւնից դուրս բերած ուղիղ և ճշմարիտ վճիռը գրւում է իբրև եզրակացութիւն։

Օրական կեանքի այս աժենօրեայ քննութիւնն ընթացաւարտ աշակերտին կամ աշակերտուհուն նպատակ է ինքնագիտակցութեան հասնելու, ճանաչելու իրեն և իր շրջապատը։

Հայր Արսէնը քահանայ ձեռնադրւեց Մակար արքեպիսկոպոսի (յետոյ կաթուղիկոս) Թիֆլիսի վիճակաւոր առաջնորդ եղած ժամանակ 1874 թ. և այն ժամանակից ցարդ ծառայ է իբրև վիճակի Մողնու ս. Գէորգ եկեղեցու և վանահայր Կուսանաց անապատի։ Գէորգ Դ. կաթուղիկոսից վարձատրւած է լանջական խաչով, տեղապահ Մակար արքեպիսկոպոսից—կամիլաւկայով և ներկայ Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ կաթուղիկոսից—աւագ քահանայութեամբ և վարդապետական խաչով։ Թիֆլիսի քահանաների մէջ Տէր-Արսէնը յայտնի է իբրև աժենալաւ քարոզիչներից մին։

Սրանից քսան տարի առաջ Մ.-Ձով. դպրոցի ուսուցչական խմբի և բարեկրօն կոյսերի նախաձեռնութեամբ յօբելեան կազմւեց հայր Բագրատունու քահանայութեան և ուսուցչական տասնամեակի առիթ և, յօբելեարի ցանկութեամբ, որոշւեց հանգանակիչ մասնախմբի հաւաքած գումարի տոկոսը յատկացնել չքաւոր հայ աշակերտների և աշակերտուհիների ուսման։ Այս բանը շարունակւում է մինչև օրս. այժմ ուսանում են չորս հոգի տեղական դպրոցներում։

Թւենք արժ. յօբելեարի գործերից մի քանիսը։ Նա հիմնել է աշակերտական համախմբումներ գրական երեկոյ անունով գիմնազիայի գրեթէ բոլոր դասարանների հայ աշակերտների անդամակցութեամբ. այս կերտական այդ միութիւնն ունէր իր կանոնադրութիւնը, ընթերցարանը, գրադարանը և գանձարանը, սակայն նրա գործունէութիւնը դադարեց մի տարուց յետոյ հիմնադրից անկախ պատճառով։ Հիմնել է գրադարան-ընթերցարան կուսանաց անապատում։ Նախաձեռնող է եղել մինչև այժմ գոյութիւն ունեցող Թիֆլիսի հայ քահանաների ապահովութեան գանձարանի հիմնադրութեան և կազմել է այդ գանձարանի կանոնադրութիւնը։ Անդամակցել է զանազան ժամանակներում հանգանակիչ մասնախմբերի և ժողովարարութիւններ է արել յօգուտ Փոքր-Ասիայի սովեալների, Ղալագէի հրկիզեալների, Երուսաղէմի ս. Յակովբեանց վանուց, Բաթումի հայ գաղթականների և այլն։

Հայր Բագրատունին աշխատակցել է տեղական գրեթէ բոլոր հայ թերթերին, ունի գրական բաւականաչափ երկեր, որոնցից տպագրած են մի քանիսը միայն։

Ոչ միայն Թիֆլիսի, այլև ամբողջ ռուսահայ հոգևորականութեան և ուսուցիչների մէջ եթէ եղել են և կան շատ գէերը, որոնք վայելել և վայելում են իրենց հօտի և աշակերտների երախտիքը, յար-

ՀՈՒՇԱՐՁԱՆ

Հրատարակվում է Նաւարձուհյաց «Միացորդաց գրքերի» առաջին հայ բազմալեզու Նաւթերէնից

(Շար. տե՛ս № 12)

—

Ոչ մի տեղ այնքան ուժեղ չէ զգացուել ազգային ոգին, որքան ծովում, որտեղ ամէն մի նաւաստի ինքն իրան է համարում ներկայացուցիչ իր հայրենիքի, եւ ամէն մի նաւ՝ հայրենիքի մի կտոր։ Ուստի եւ ամէն մի նաւ ունի իր անունը, որ ամենայն սրբութեամբ գրուած է լինում նաւի երկու կողմերում։ Ամէն մի նաւ ունի իր դրօշակը, որ ծածանւում է նաւի վերեւում։ Ամէն մի նաւ ունի իր զինանշանը, որ նկարուած է լինում նաւի առջեւի մասում։ Ամէն մի նաւ ունի իր նաւապետը, որ նաւի վրայ ամենամեծ պատիւն է վայելում։ Ամէն մի նաւ ունի իր նաւաստիները, որոնք իրանց նաւապետի հրամանները կատարելիս՝ ամենայն ճշտութեամբ եւ ամենայն ստրկական հնազանդութեամբ են վարւում։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգիստը, ուր նա ամէն անգամ ապահով ապաստան է գտնում։ Ամէն մի նաւ ունի իր ուղղութիւնը, որ նաւապետը ամէն անգամ ճշտութեամբ պիտի պահէ։ Ամէն մի նաւ ունի իր ուղեգիրը, որ նաւապետը ամէն անգամ ճշտութեամբ պիտի կատարէ։ Ամէն մի նաւ ունի իր ուղեցոյցը, որ նաւապետը ամէն անգամ ճշտութեամբ պիտի հետեւի։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետը, որ նաւի վրայ ամենամեծ պատիւն է վայելում։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետները, որոնք իրանց նաւապետների նման ստրկական հնազանդութեամբ են վարւում։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետների ուղեցոյցը, որ նաւահանգստապետները ամէն անգամ ճշտութեամբ պիտի հետեւին։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետների ուղեգիրը, որ նաւահանգստապետները ամէն անգամ ճշտութեամբ պիտի կատարեն։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետների նաւապետները, որոնք իրանց նաւահանգստապետների նման ստրկական հնազանդութեամբ են վարւում։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետների նաւապետների ուղեցոյցը, որ նաւահանգստապետների նաւապետները ամէն անգամ ճշտութեամբ պիտի հետեւին։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետների նաւապետների ուղեգիրը, որ նաւահանգստապետների նաւապետները ամէն անգամ ճշտութեամբ պիտի կատարեն։

Ամէն մի նաւ ունի իր ուղեգիրը, որ նաւապետը ամէն անգամ ճշտութեամբ պիտի կատարէ։ Ամէն մի նաւ ունի իր ուղեցոյցը, որ նաւապետը ամէն անգամ ճշտութեամբ պիտի հետեւի։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետը, որ նաւի վրայ ամենամեծ պատիւն է վայելում։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետները, որոնք իրանց նաւապետների նման ստրկական հնազանդութեամբ են վարւում։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետների ուղեցոյցը, որ նաւահանգստապետները ամէն անգամ ճշտութեամբ պիտի հետեւին։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետների նաւապետները, որոնք իրանց նաւահանգստապետների նման ստրկական հնազանդութեամբ են վարւում։ Ամէն մի նաւ ունի իր նաւահանգստապետների նաւապետների ուղեցոյց

Նրա տեղը կարգած է Տ. Աշոտ վարդապետը։

Ղարաբաղի առաջնորդութիւնը վաղուց ի վեր զգալուն էր առաջնորդեւլուց. նա իր կոչումը մոռացել էր. նա դարձել էր լոկ հետեւող մի քանի անկարգ մարդկանց, որոնք միայն իրենց անձնական արատաւոր շահերով էին գնահատում ու քարշ տալիս իրենց հետից և՛ Գառնակերեան առաջնորդին, և՛ քահանայութիւնը, և՛ խեղճ ժողովրդին։ Այդ անկարգ մարդիկը Ղարաբաղի կոնսիստորիայի ծառայողներն են։

Դրանց գործած անկարգութիւնները այնտեղ հասան, որ նոյն իսկ համբերատար էջմիածինը ցնցուեց, բարի և նեղող սրբազնագոյն Հայրապետի զայրոյթը շարժեց։ Սրբազնագոյն Հայրապետը օրհնաց հիմունքով իր մի սրբատառ կոնդակով յանուն սինոդի անդամ Տ. Աշոտ վարդապետի հրաժարեցրեց արձակել կոնսիստորի ծառայողներին իրենց պաշտօններից։ 1899 թ. Աշոտ վարդապետը հայրապետական սրբատառ հրամանով Շուշի մտաւ և վռնդեց անկարգներին իրենց պաշտօններից։ Կոնսիստորի ծառայողները փութացին Ս. Էջմիածին, հիւրընկալուեցան իրենց հովանաւոր Մակար եպիսկոպոսի մօտ։ 1900 թ. աշնանը բաղդի խաղով Գառնակերեան եպիսկոպոսը Ղարաբաղի առաջնորդ կարգուեց։ «Կայսերահաճոտառ» սրբազանը, Հայրապետին մոռացաւ ու վերստին ծառայութեան հրաւիրեց կոնդակով արձակուածներին։

1902 թուին երբեմն Ղարաբաղի թեմի կառավարիչ Սաֆրաստեան Գարեգին եպիսկոպոսի դատն եղաւ Շուշում։

Դատում էր Գարեգին սրբազանին Գանձակի հոգեւոր դատարանի ժամանակուայրը։ Դատը ծածուկ բողոքների—դանօսների—հետեւանք էր։ Ի միջի այլոց դատի ժամանակ նախագահը զարթից հանելով մի բողոք (ДОНОСЪ) ցոյց տուեց կոնսիստորի ծառայողապետ Միրզին։ «Այս ձեր դանօսն է», հարցնում է նախագահը։

Ուրանալ անկարելի էր. «բայց, բացատրում է դանօսչիկը, մենք ղրպարտել ենք եպիսկոպոսին, մենք սուտ ենք սարքել, որովհետեւ նրանից վախենալով որ մեզ ծառայութիւնից դուրս կանի, աշխատում էինք մի կերպ Շուշուց հեռացնել տալ նրան»։

Նախագահի և անդամների դէմքը ղուանքով ծռմռեցաւ այդ խոստովանութիւնը լսելիս։ «Ես դուք այժմ դեռ կոնսիստորո՞ւմ էք», զարմանքով հարցրեց նախագահը։

Այդ դատի ժամանակ բնորոշ էր նաև Սաֆրաստեան եպիսկոպոսի պաշտպան երդուեալ հաւատարմատար կրաստովսկու մի խօսքը. «Պ. դատաւորներ, թէև կոնսիստորի այս երկու չինովնիկները իմ կլիէնտիս օգտին վկայեցին, բայց և այնպէս նրանք ամենասուրբ աստիճանի բարոյականի տէր անձինք են»։ (Տես. «Նոր-Դար»-ի նոյն տարւոյ համարները)։

Այնուամենայնիւ Գառնակերեանը «կայսերահաճոտառ եմ» ասելով զօրաւոր՝ պաշտպանեց նրանց, պաշտօնների մէջ պահելով և աշակերտելով։

Էլի բողոքներ, էլի քննիչներ Էջմիածնից Շուշու կոնսիստորիականների դատը տեսնելու։ Բայց բան չէր դուրս գալիս. առաջնորդի խնամակալներին շարժելու հնար չեղաւ։

Վէհը նոր կոնդակ արձակեց առ Գառնակերեան արձակել արծակեալներին։ Կարճ տորոզրիալը պատասխանում է, որ «այդ իր գործն է, թեմն իրեն է պատկանում»։ Վերջապէս 1904 թուին Ս. Էջմիածնի սինօդը վճիռ է հատանում և հրաման արձակում առաջնորդին՝ արձակել բոլոր ծառայողներին և յանձնել քաղաքական իշխանութեան դատին։ Սինօդն էլ իր բաժին մեղաժուռն ստանում է Գառնակերեան եպիսկոպոսից։ Ու... և... և ծառայողները շարունակում են մնալ իրենց պաշտօններում։

Այս միջոցներից էլ խէր չը տեսաւ ժողովուրդը։ Այնուհետև ժողովուրդը ղողոքներով ու պատգամաւորութեամբ սկսաւ թակել հոդոր իշխանութեան դուռը և խնդրել որ հեռացնէ իրենցից Գառնակերեանին։ Վէհը, այլևս չը հանդուրժելով, օրինական ճանապարհով արձակեց Գառնակերեանին, նրա տեղը Աշոտ վարդապետին կարգելով։

Այնուամենայնիւ Գառնակերեանն և իր հովանաւոր սատրապրեաները պարապ չեն։ Սրբազանը փոյթեռանդ ջանքով իր առաջին և միակ առաջնորդութեան վերջալոյսին ծագկեայ փիլոնները ու գաւազանը է «բաշխում» թեմի քահանաներին, անվերջ ու անխըտիր։ Ինչո՞ւ. այդ մասին լռում ենք։ Իսկ բազմից վռնդելու դատապարտած կոնսիստորիականներն այժմ աշխարհը ողողում են նամակներով, շատ ոտքեր լանում շողոքորթի արցունքներով ու սրան նրան աղաչում են, որ միջնորդեն նոր առաջնորդ Աշոտ վարդապետին իրենց պաշտօնները պահելու։ Այս նոր վարմունքից երկու եղրակացութիւն է դուրս գալիս. նախ՝ որքան ատոր կարծիք ունին այդ պարոնները Աշոտ վարդապետի մասին և երկրորդ՝ որքան աներես են ու անպատկառ, որ դեռ ուզում են էլի մնալ ու ծառայել նախատինքների, վճիռների և դատերի տարափի տակ։

Վկայած անկարգութիւններն ու անկարգները դեռ յոյսեր ունին յաջողութիւն գտնելու։ Այս անգամ իզուր կանգնեն այդ յոյսերը. Վեհափառ Հայրապետի անհունապէս լայն սիրտը ցաւած է, սինոդում այժմ երիտասարդ ընտիր ոյժեր են նստած, որոնց արդարասիրութեան վրայ մեծ յոյս ունինք։ Աշոտ վարդապետը իր իսկ ձեռքով վաւերացած վկայած անկարգներին պահողը չէ։ Նա կը խղճայ մեր հէգ ժողովրդին ու բազմաչարչար եկեղեցուն։ Նա պակերախտ չի լինիլ դէպի Հայրապետը։

Ղազանչեցի

Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Ս. Պետերբուրգ, 2 ապրիլի

Այսօր եկեղեցական երգեցիկ խումբը պատուեց մեծ վարպետի՝ այդ եկեղեցու նախկին խմբապետ հանգուցեալ երաժշտագէտ Մակար Եկմալեանի յիշատակը։ Յատկապէս այդ օրւայ առթիւ հոչակաւոր պրօֆ. Րիմսկիյ-Կորսակովի մօտ թէօրիայի դասընթացը աւարտած հայազն երաժշտագէտ պ. Գրիգոր Միրզայեան, որը տեղոյս եկեղեցու խմբապետն է, պատրաստել էր հանգուցեալի քառաձայն խառն խմբի համար պատարագի արարողութիւնը։

Զը նայած, որ խումբը շատ կարճ ժամանակամիջոցում էր պատրաստած (ընդամենը 6—7 փորձ էին ունեցել), այնու ամենայնիւ հիանալի տպաւորութիւն թողեց, փառաւոր կերպով կատարելով իրեն յանձնուած այդ պատասխանատու գործը և այն էլ նուրբ ու ճաշակով։

Նիւանսներն ու շեշտերը, որքան ես նկատեցի, Եկմալեանի գրածները չէին. այստեղ խմբի ղեկավարը նպատակաւ շեղուել էր պարտիտուրայից և իր նուրբ ճաշակի հոտառութեամբ կարողացել էր պարտիտուրայի այդ մեծ պակասը լրացնել, մի պակաս, որը ոչ միայն թեթեւանկատ է եղել, այլ և աչքի է պարնուել Եկմալեանի քառաձայնած պատարագի արարողութեան մէջ։ Մի ուրիշ նորամուծութիւն, որ արել էր պատարագի վերաբերմամբ պ. Միրզայեան, այդ այն էր, որ տեղ տեղ տենօրները երգուում էին ակկորդի մէջ բաց թողնած հարմոնիկ նօտաները, հնգաձայն էին կազմում, որով և նըպաստում էին խմբի մեւելի բնորոշութեան ու լիքը հնչելուն։ Այս նորամուծութիւնը սկզբունքի տեսակէտից թոյլատրելի է, վասն զի հեղինակը իր պարտիտուրայի դաշնամուրի նւագակցութեան մէջ բարւոք է համարել պահել այդ նօտաները—այլ նրա ցան-

---

